ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<01>> 02 2016թ. N: 7 գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի երկրորդ մասով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թվով 7՝ <<Գյումրու թիվ 21 <<Օյունջյան>> միջնակարգ դպրոց-վարժարան>>, <<Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց>>, <<Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց>>, <<Կամոյի միջնակարգ դպրոց>>, << Նոր Ախուրյանի հիմնական դպրոց>>, <<Կրաշենի հիմնական դպրոց>> և <<Հովիտի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանի, Արտակ Հայրապետյանի և Մուշեղ Մուրադյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտի անցկացվող

պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեներին և հաշվապահներին:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 21 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն:
5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է